ՏՆԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑ – ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (MEHKO)

ՓԱՍՏԵՐԻ ԹԵՐԹԻԿ

EHConsultative@ph.lacounty.gov | (626) 430-5156

MEHKO-ի մասին

«Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության» օրենսգիրքը («Կալիֆորնիայի մանրածախ սննդի» օրենսգիրքը) փոփոխվել է 2019 թվականի հունվարին՝ ստեղծելու «Տնային խոհանոց - փոքր ձեռնարկության աշխատանքը» (Microenterprise Home Kitchen Operation **(MEHKO)**)՝ որպես սննդի մանրածախ առևտրի նոր տեսակ: MEHKO-ն սննդի կետ է, որը շահագործում է բնակիչը իր մասնավոր խոհանոցից: Թույլտվություն ստանալուց հետո բնակիչը կարող է փոքրիկ ռեստորանի նման սնունդ պահել, մշակել, պատրաստել և մատուցել հանրությանը, ինչպես թույլատրվում է նահանգի օրենսդրությամբ:

MEHKO-ները ներկայումս լիազորված չեն

Լոս Անջելեսի Շրջանի Վերահսկիչների Խորհուրդը 2023 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատել է վերահսկիչ Հոլլի Ջ. Միչելի միջնորդությունը «Անվտանգ և կարգավորվող առևտրի և փոքր ձեռնարկատիրության հնարավորությունների հասանելիության պարզեցման» վերաբերյալ: Հանրային Առողջության Վարչությունը, համագործակցելով Շրջանի Խորհրդականի և Տնտեսական Հնարավորությունների Վարչության հետ, աշխատանքներն ուղղում է՝

1. Հանրային Առողջության Վարչության կողմից MEHKO-ների աշխատանքը թույլատրող հրամանագիր մշակելուն:
2. MEHKO-ն կարգավորող հրամանագրի մշակման ընթացքում իրազեկելուն և շահագրգիռ կողմերին ներգրավելուն:
3. Սննդի անվտանգությանն առնչվող տնային մանրածախ առևտրի աշխատանքների մասին հանրային կրթական ծրագիր կազմելուն:

Թարմացումների համար տես **«Իրականացման ժամանակացույցը»**՝ https://bit.ly/mehko-lacounty

MEHKO-ի օգուտները

- Փոքրամասշտաբ, տանը պատրաստելու աշխատանքները կարող են զգալի տնտեսական հնարավորություններ ստեղծել Լոս Անջելեսի Շրջանի բնակիչների համար, այդ թվում՝ կանանց, ներգաղթյալների և մաշկի տարբեր գույն ունեցող մարդկանց համար:
- Տնային խոհանոցի աշխատանքը տրամադրում է ուղեցույցներ, դասընթացներ և սննդի անվտանգության աղբյուրներ տնից աշխատող խոհարարներին՝ հասարակությանը սպասարկելու ժամանակ սննդամթերքի անվտանգության գործողությունների մասին գիտելիքներն ավելացնելու համար:
- Տնային պայմաններում պատրաստված սննդի փոխանակումը կարող է բարելավել առողջ սննդի հասանելիությունը համայնքների՝ հատկապես նրանց համար, ովքեր խիստ սահմանափակ միջոցներ և տարբերակներ ունեն:
- MEHKO-ները կօգնեն մայթերին սնունդ վաճառողներին՝ ծառայելով որպես պատրաստման կետ նրանց Սննդի շարժական փոքր կետի աշխատանքների (Compact Mobile Food Operation (CMFO)) համար:

MEHKO-ի պահանջները

- Շահագործման համար պահանջվում է Հանրային Առողջության Վարչության թույլտվություն: Աշխատանքները ենթակա են տարեկան ստուգումների և բողոքների հիման վրա արվող ստուգումների:
- MEHKO-ում չի կարող աշխատել լրիվ դրույքով մեկից ավելի աշխատող (բացի ընտանիքի անդամներից կամ տան անդամներից):
- Սննդի անվտանգության քննությունն անցելուց հետո MEHKO շահագործողը պետք է ստանա «Արտոնագրված սննդի պահպանության վերահսկիչի» (Certified Food Protection Manager) վկայական հաստատված և հավատարմագրված կազմակերպությունից և այն հանձնի MEHKO-ի դիմումի հետ միասին:
- MEHKO-ում ներգրավված յուրաքանչյուր անձ պետք է ձեռք բերի «Սննդի հետ աշխատողի քարտ» վկայականը (Food Handler Card Certificate) Կալիֆորնիայի հաստատված մատակարարից և այն հանձնի MEHKO-ի դիմումի հետ միասին:
- Սնունդը պետք է մշակվի, եփվի և մատուցվի կամ առաքվի նույն օրը, երբ այն պատրաստվում է:
- MEHKO-ն կարող է ստանալ թույլտվություն՝ օժդակելու առանձին արտոնագրով գործող Սննդի շարժական փոքր կետի աշխատանքներին (Compact Mobile Food Operation (CMFO)):

MEHKO-ի արգելքները

- MEHKO-ներն ունեն վաճառվող սննդի քանակի սահմանափակում՝ շաբաթական 90 կերակուր և օրական 30 կերակուր սահմանաչափով, տարեկան $100 000 ընդհանուր եկամուտով:
- Սննդի այլ հաստատություններին սնունդ վերավաճառել չի թույլատրվում:
- MEHKO-ն չի կարող օգտագործել երրորդ կողմի առաքման հավելվածներ, ինչպիսիք են Uber Eats-ը, Postmates-ը, Grubhub-ը, DoorDash-ը և այլն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրվում է «Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության» օրենսգրքի Բաժին 114367.5-ով:
- Չունի մատուցման ծառայություններ (catering) կատարելու թույլտվություն:
- Չունի թույլտվություն՝ շահագործելու Քոթեջի սննդի աշխատանք (Cottage Food Operation (CFO)):
- Չի կարելող մատուցել ալկոհոլ կամ ալկոհոլ պարունակող սնունդ՝ առանց «Կալիֆորնիայի ալկոհոլային խմիչքների վերահսկման ծրագրի» արտոնագրի (California Department of Alcohol Beverage Control (ABC) Program):

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք https://bit.ly/mehko-lacounty կամ կապ հաստատեք **«Համայնքների և արդյունաբերական ոլորտի հետ համագործակցության» ծրագրի հետ (626) 430-5156 հեռախոսահամարով:**